Ծանուցում

Հարգելի բաժանորդ

Պողոսյան Գայանե (բաժանորդի անունը) 0423191 (քարտի համարը)

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տեղեկացնում է, որ Ընկերությանն է ներկայացվել դիմում գ.ՆուռՆուս 22թաղամաս 55 այգետնակ հասցեում Ձեր պայմանագիրը լուծելու պահանջի վերաբերյալ: Դիմումին կից ներկայացվել է տվյալ հասցեի անշարժ գույքի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը հավաստող իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 5-ի N 5-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄԱ) 52-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության դրույթների՝ Պայմանագիրը լուծվում է՝ **Բաշխողի կողմից միակողմանի՝**

սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի դեպքում, եթե Սպառողը չունի ԷՄԱ կանոններով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

Համաձայն ԷՄԱ կանոնների 53-րդ կետի՝ **Սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում, ԷՄԱ կանոնների 52-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն, Պայմանագրի լուծման հարցը որոշվում է վեճն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո:**

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո 10 /տաս/ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությանը ներկայացնել գ.ՆուռՆուս 22թաղամաս 55 այգետնակ հասցեի անշարժ գույքի նկատմամբ Ձեր իրավունքների կամ իրավունքների վերաբերյալ կողմերիդ միջև վեճի առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Վերը նշված ժամկետում պահանջնվող հիմնավոր փաստաթղթերը չներկայացնելու դեպքում ղեկավարվելով ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 3-րդ ենթակետով և ԷՄԱ կանոնների 52-րդ կետի 3-րդ ենթակետի կարգավորումներով, կողմերիս միջև 09/08/2017 թվականին կնքված պայմանագիրը կհամարվի լուծված:

Փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել «ՀԷՑ» ՓԲԸ
«ԽՍՍ» Տնօրինության, «Նաիրի» ՇԷՑ
ՀՀ Կոտայքի մարզ ք.Եղվարդ Շիրակի 30

Հարցերի դեպքում զանգահարել 060 71 14 91 հեռախոսահամարով

«Նաիրի» ՇԷՑ-ի պետ _____ **Ա.Խաչատրյան**
(տնօրենի անունը, ստորագրություն)

16/09/ **2022թ.**